




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՏՈՐԱԴՈՐԱԿԱՆ ԴԱՐԱՆ

ԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՐԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՍՐԻ

ԹԻԻ 79

25 ՅՈՒՆԻՍԻՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱՌԱՌՆԵՐՈՒ

ԵՐ ՌՊ ՏԱՐԻ Գ 25 Յունուար 1913 Գ Թիւ 79

«Մրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առնագանգ շաքապերէր շա-
րունակէ Հայաստանի Կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի զաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնատուութեան համար
Մրբազան Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շաքապերէրը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Դամոկ Կարդ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեղեանց, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամուրաւ:

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՅԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂՈՍԿԷ ԴԱՀԱՏԱԿ

Է

Ե ՊԱՐԳՈՍԱՐԱՆ

(Շար.)

Երանելին Տէր Կոմիտաս թէ՛ տաճկերէն
լեզուին եւ թէ՛ քաղաքական օրինաց քաջ
հմուտ ըլլալով չվարանկեցաւ իսկոյն պատաս-
խանելու եւ ըսաւ. «Եթէ Զեր Վսեմութիւնը
անոնց անիրաւութեան մասնակից ըլլալ չու-
զեր, պէտք է համոզուի թէ ես ընաւ յան-
ցանք չունիմ, ո՛չ պետութեան դէմ եւ ո՛չ
ալ մեր ծիսից դէմ, վասն զի ես Հայ եմ,
Քրիստոնեայ եմ եւ մեր վեհափառ Տիրոջ

հաւատարիմ հպատակն եմ եւ մէն մի տարի
հաւատարմութեամբ հարկս վճարած եմ» (*):

Մինչ այս խօսքերն կ'արտասանէր, զոր-
պանէն հանկէ իւր հարկաթուղթերը եւ ցոյց
սուաւ. «Եթէ այսպէս է, կրկնեց եպարքո-
սը, քեզ ամբատանողները, որ քեզի պէս
անոնք ալ քրիստոնեայ են, ինչո՞ւ ուրեմն
տրտունջ կ'ընեն քեզէ իրրեւ թէ անոնց կը-
րօնքը ձգած ես. խոստովանէ՛ ի՞նչ ըրած ես»:

Աստուծոյ ծառան պատասխանելով ըսաւ
թէ՛ «Իմ եւ անոնց մէջ մեծ տարբերութիւն
կայ. վասն զի ես ճշմարիտ քրիստոնեայ եմ.
մինչ անոնք այնպէս չեն»: «Ի՞նչ է այդ տա-
րբութիւնը», ըսաւ եպարքոսը: Տէր Կոմի-

(*) Ուղղափառ Ս. Եկեղեցիէն Տերձեայ Հայերը
լաւ կը ճանչնային թէ Տէր Կոմիտասին կրօնքը եւ
ծէսը հայ եկեղեցւոյ կրօնքէն եւ ծէսէն տարբեր ըսն
մը չէր, երբ նոյն եկեղեցին Տերեաթիկոսութեամբ տա-
կուէն արատաւորուած չէր: Սակայն Երանելին Կա-

տաս պատասխանեց ու ըսաւ . «Դու որքան որ քրիստոնեայ չես , օրէն չէ որ զայն վիտնաս» : Այս պատասխանին վրայ բնականաբար եպարքոսը զայրանալով ըսաւ . «Դու գիտես որ ես քեզ կրնամ սպաննել» : — «Այո , ըսաւ Տէր Կոմիտաս , եթէ զիս սպաննել կ'ուզես ինծի չնորհք մը ըրած կ'ըլլաս , սակայն պէտք է գիտնաս թէ զիս սպաննելու քու ունեցած իշխանութիւնդ , միայն իմ մարմնոյս նկատմամբ կրնայ ըլլալ , ո'չ թէ հոգւոյս : Հետեւաբար եթէ զիս կը սպաննես , գիտցած ըլլաս թէ Աստուծոյ՝ արդար Դատաւորին հաշիւ պիտի տաս . ուստի դատաստանդ պէտք է որ արդարութեամբ կատարես» :

Ուսմարութեան մօտ՝ կասկածելի ցոյց տալու վախճանաւ . իրենց մատուցած անդեկադրին մէջ դիտմամբ իրեն դէմ իբրեւ յանցանք վերագրեցին Ֆրանկաց կրօնքն ու ծէսը . իբրեւ թէ նա Հայոց կրօնքին ու ծէսին մէջ նորութիւն մը ներմուծած ըլլար :

Յայտմ մասին հարկ է լուսաբանութիւն մը արդուելու : Երբ Տէր Կոմիտասին մէջ Ֆրէնկ , Էմբէն , Ֆրէնկ ալիքի , եւ այլն . բառերը բացարձակ կերպով կը նշանակէին օտարացած , տեղաբնակ հարկ չվճարող , քաղաքէն ապստամբ , եւ այլն . ինչպէս երեւելի քահանայ Մովսիս տուած ձեռնարկէն կամ մեկնաբանութեանն ակն յայտնի կ'երեւի . եւ հետեւաբար իբր ժողովուրդացած դատաւարութեանը նկատմամբ էին իբր պետութեան ֆուստկար կամ ապստամբ . ոչ զի վասն եւ 8 . Կոմիտաս իր վրայէն այս զրպարտութիւնը նետելու համար իր հարկաթուղթերը ցոյց տուաւ : Էջմիածնականք առհասարակ Կաթողիկէի դէմ խորհրդակցութեամբ այս զրպարտութիւնը կը նշանակէին : Հոս կ'ուզենք գնել նորութեամբ՝ վերոյիշեալ նշանաւոր Մովսիսին Ֆրէնկ վանքի տուած է ի թուին տաճկաց 4183—1774 , իբր թանկագին փաստաթուղթ կ'ըսէ :

«Էմբէն Բիւսիսի պէն էլ միւսիմյն Ժրանչալու վէ Նեմէլի վէ Թալանեօլ վէ Բալանեօլ վէ Ֆիլիմէնկ վէ Ինկիլիկ վէ պու միսիլի գրաս էսվալ վէ Եսրգա կիլիկիէ սիր , վէ Եսիլի Էմբէն» իսթիմալի հաստատելու մեղադրանքն ալ իմիջեալ վէ պու մանա իւզէրիմ օլ Խիսթիյանլարա տրիէ Բի հէր գանդը քալիմ վէ վիսլիքսն օլուպ Էմբէն գրալար Եսիլի անկիլիկ ասլիքսն աստէքս մուգիմ էլիլիքիսն արգա քուրքնայ , անկէսն հիմալէք վէ հիւստէք օլունմալարլալ փաշեանը Խալալա խալալ վէրմէլուլ անքն իթաւքնս օլմարգլար իշիլիկ պիզ անկիլիկ րայա տիլի պուլունուլ . վէ պու տէպէսն խալգ արաւքնս անկիլիկ պազը Բեռէ Եսիլի ասի , Բեմբի քեմիլէ օլունուր .

տանդ պէտք է որ արդարութեամբ կատարես» :

Այն ատեն քահանայք եւ ժողովուրդք բարձր ձայնիւ պոռալ ոկան . «Վերցնէ՛ք մէջտեղէն այս վատը եւ թոյլ մի՛ տաք խօսելու . վասնզի նա մահուան արժանի է , եւ եթէ քիչ մ'ալ մեր մէջ մնայ , մեր Ազգը պիտի մոլորեցնէ» :

Տէր Կոմիտասին վերջին պատասխանը այնքան լուրջ , եւ աներկիւղ ոճով մը արտասանուած էր որ բոլոր ատենականք անոր համարձակութեան եւ իրաւացի խօսքերուն վրայ ապշած մնացած էին . իսկ լուրջիւն մը վերջին անգը դատաստանին սարսափը

սինի Էմբէն վէ ալիլի Էմբէն» Ֆրէնկիլիկ սինի վէ ալիլի Էմբէն սիր , Բի՛ պիզիմ ինկիլիկսն՝ պիզէ քսեան իւզէ օլմալալ եմմանա սր . գիւրա էկէր պիզէ խալար վերիլիքսն Բի րայալարմարգսն պիլի սինի Էմբէնէն սալիլ Բիլիք սիր . պիզ անք քաշեանլարմարմ իթաւքնսն խուրուն իթիք կիսիլի պիլիլիկ , գիւրա մեմուրանլարմ սինիսն օլմալալ էպէքսէ Եսիլիքսն պիզէ ասի վէ անկիլիկ մուլի վէ գանիլ օլմար մուլարմ սիր . սինի Գաթիլի պու անէ կիլիկի վէ պիզիմ մալիլմիլիկ էկիլի իսի , վէ լալիլ Էմբէնիլիկ մալիլմիլիքսն պէքսէվալ գուրուր իսէն միւնալալար սէպէլիլի միւլիլի օլսուր մերքէվէ մէմ օլունուր Բի Գաթիլիլիկ էպէքսէ մերքէլի անալի պէլիլիկսն՝ պիլի զայր քարգ մերքէլ օլմար սր Բի ալիլ մերքէլի անալարայէ աննալ ոլունուր սին հազգնա մուլալիլ օլու :

Իմզա

1 1 8 5

Իմ Էմ Էմ Բ

ձեմալիլ էվիլէ 25

Ոչ զի վասն Աստուծոյ ծառան Թուրք կառավարութեան առջեւ Ֆրանկաց կրօնքն եւ ծէսն մասին շարունակաբար լուրջիւն պահեց . եւ բաւ համարեց մի միայն պաշտպանելու զինք ըսելով թէ «Ո՛չ պետութեան ո'չ Հայոց ծէսին դէմ չեմ մեղադրած , եւ թէ Հայ Քրիստոնեայ եմ եւ վեհափառ Կոյսեր հաւատարիմ հպատակ եմ , եւ կամ ճշմարիտ Քրիստոնեայ եմ , հակառակորդներէս տարբեր , եւ թէ Հայոց հաւատալեացը մէջ սխալներ գտած եմ , եւ ճշմարիտ հաւատքը դաւանած եմ» : Եւ Ղալաթիլի դատաւորին տուած վճռոյն մէջ , Տէր Կոմիտասին ըրած յայտարարութեան հակառակ Ֆրանկաց իրօքի եւ ծէսի բառերուն գործածուած ըլլալուն պատճառն ալ սա էր թէ դատաւորը Պատրիարքին հաճելի ըլլալու կ'աշխատէր : Որովհետեւ եթէ դատաւորը Տէր Կոմիտասին լուրջով տուած պատասխանի հակառակը մեկնաբանելով՝ Ֆրանկաց կրօնքն ու ծէսը արձանագրած չըլլար , Պատրիարքը չպիտի կարենար Տէր Կոմիտասին դէմ վկայներ հայթայթել :

կ'աղբէր ներկայից վրայ. ամէն մարդ իր խիղճը կը քննէր. ոչ ոք անմեղ էր հոն, բայց ի ներսնելի Տէր կոմիտաւն. անմաքուր սիրտերն խայթ մը պարուրած էր. այդ խայթը այդ մահացու երկիւղը վայրկեան մը փարտատելն խոստանին աղաղակը եւ անորամաբան դժոխային բառերն: Հոն կար մէկ մը որուն խիղճը ամենէն աւելի անհանգիստ էր. եւ այն՝ Նալարքուն էր որ մտադրած էր վեր ի վերոյ եւ իցոյց հարցաքննութիւն մը կատարելով վատընկիւ երկու բան, պատրիարքին՝ եւ մաս մը ժողովրդեան կամքը կատարած ըլլալ, եւ երկրորդ զիւրաւ մարտել ստացած արծաթոյ գումարները. ոսկայն հարցաքննութիւնը՝ իւր նպատակին չհամապատասխանեց. խաբուեցաւ. հաղորդ անգամ զգաց թուրութեամբ խօսքը երկարելուն վրայ. տեսաւ թէ անուրի դատաւճիռն արձակելու նիւթ չկար կամ ինք ծանրակշիռ տարակոյսներ ունեցած էր եւ ատենանդ դռնիակ կամ չորս աչքի առջիւ էր, հետեւաբար խռովեցաւ: Թէ եւ նա ըստ ինքեան չար չէր. բայց մարդ էր վերջապէս, տկար մասը ան ալ ունէր, դրամով ստիպուած էր ուրիշին կամքին գերի ըլլալ, ծախել իւր աղատ կամքը, ճշել կը աքնէր ձայնը ներքին ճշմարտախօսին, եւ անխաւ, անարդար վճիռ ճարահատ ականներուն տակ կը ծախմէր: Յաղթեց վերջապէս խղճին լոյսը, բայց վայրկեանապէս, այն խաւարին՝ որ միթագնած էր եղարքոսին կրից միթնուրորդ: Զարձակեց, կամ ատենականաց բազմութենէ՝ ունեցաւ երկիւղը արձակելու յանկարծ մահուան դատաւճիռը:


Ուստի Նալարքոսը հրամայեց որ Տէր Կո-

միտասը բանտ առաջնորդուի, եւ ասեանը փակեալ հռչակեց, Հայերը մեծ մտահոգութեան ենթարկելով:

Հետեւեալ օրը, որ Հինգշաբթի էր, 23 հոկտեմբեր, Ասեանը (Տիվան) փակուած ըլլալով Նալարքոսը աղատ ժամանակ ունեցաւ հնարք մը գտնալու գործին մէջէն մաքուր ելլելու եւ կամ պատասխանատուութիւնը ուրիշին վրայ բեռնաւորելու համար: Եւ ահա յղացած հնարքը այս եղաւ. կանչեց իր մօտը պաշտօնեայնէն մին եւ առաքեց զայն միւլթիին հարցնելու եւ պատասխան մը բերելու համար թէ կրնա՞յ արդեօք մէկ մը ըստ օրինի մահուան դատապարտուիլ այդպիսի խնդրոյ մը համար: Պաշտօնեայն քիչ մը վերջ հեւ ի հեւ վերադարձաւ «ոչ» պատասխանով: Այս չի բաւեց, դեռ ուրիշ մահախտական շատ մը օրէնագէտներու հարցուեցաւ. ամենքն ալ նոյն փառաւոր «ոչ» պատասխանը առաքեցին Նալարքոսին: Այս անպատասխանութեանը գրեթէ յուսահատութեան մատնեցին զինք եւ վերջին անգամ մին ալ իւր հանճարոյն, հոգւոյն բարձրագոյն կարողութեանց գիմում մը ընելով, գտաւ վերջապէս այն հնարքը որ կրնար իւր դժուարութեանց հանդոյցը քակել եւ հարթել իրեն այն ուղին՝ որուն միջ յիմարաբար կը խաբիւրէր, այս հնարքը եղաւ Տէր կոմիտասը Ղալաթիոյ «Քէթիվանէն» զրկել: Ուստի հրամայեց որ ամբաստանողներն երթան հոն հետեւին թանկելով նաեւ զՏէր Կոմիտաս եւ ներկայանան «Մօլլայ»ին եւ հարկ եղած օրինական քննութիւններէն վերջ, նպատաւով վճիռը «Քէթիվան» բերն իրեն (Շար.)

Տ. Խ Դադարակոյն անհանգստութեան պատճառաւ անցեալ թիւին (78) մէջ սրբազրոյին անուշադրութեամբ շատ մը կէտադրութեան ու տառական սխալներ սրբագծ են, եւ քանի մը հատ ալ խմբատի խանգարումներ, որոնց գլխաւորները կը փութանք ուղղել հաս:

Էջ	40	2-դ	Ս.	Տող 4,	Կարգա՝	«Պատմիչի խիւտա»:
»	»	»	»	20,	»	«Շէթմ ու խաթա իլէ»:
»	41	1	Ս.	42,	»	«Յ. Սոսկ Եկեղ. — Իրական»:
»	»	»	»	34-5,	»	«Եւ մարտնչները»:
»	42	1	Ս.	8,	»	«Այնպէս որ»:
»	45	4	Ս.	10	»	«Ետա քաղաքաւորական»:
»	»	»	»	44	»	«Տեօաւ Ս. Հօնր Ամենի»:
»	»	»	»	48	»	«Գրեց Ս. Հերոնիմոս»:
»	»	»	»	20	»	«Անոր արմաւենիէ շինուած»:
»	»	»	»	22	»	«Ս. Անտոն առ Տէր փոխուեցաւ 356ին, 126 տարեկան»:
»	»	2	Ս.	7	»	«Մուհարրիք»:
»	»	4	Ս.	7	»	«Հէյէթ ալիմէրի»:



ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ ՌԻՂՂԱՓԱՌԱՑ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳԱՅԷՆ ՀՌՈՎՄԱՅ

Սիրեցեալ Հոգեւոր Ողոնց մեքոց, Առաքելապաշտ ազակցաց,
Գեղ. Տ. Ժողովրդապետաց եւ Պատուական Վարդապետաց
Աւագ Թեմիս Ողջոյն եւ Աստուածաւանդ օրհնութիւն

Սիրեցեալ Որդեակի,

Քրիստոսի Սուրբ Եկեղեցին ո՛րքան մեծ փոյթ ունի իր Աստուածային հիմնադրէն հառ-
տատուած քահանայութեան կարգե խորհրդոյն
միջոցաւ իր մէջը ունենալու սրբակեաց, ի-
մաստուն եւ եռանդնալից պաշտօնեաներ,
Աստուծոյ ժողովուրդը կառավարելու եւ զա-
նի առաջնորդելու համար յաւետեանական վեր-
կութեան . նոյնքան ալ հոգ կը տածէ Պատ-
կի Սուրբ Խորհրդոյն արժանապատուութիւնը
միշտ բարձր բռնելու . որպէս զի նոյ-
նին ըստ արժանւոյն մատակարարութեամբը
կարող ըլլայ ստանալ առաքինի ծնողքներ եւ

անոնցմէ ծնանելիք բարի եւ կրօնաբէր զա-
ւակներ : Գիտնալով այս եօթներորդ եւ վեր-
ջին խորհրդոյն , այսինքն պնակին , մեծ կարե-
ւորութիւնը եւ սրբութիւնը , կուզանք
Ձեզի, սիրեցեալ որդեակք ի Քրիստոս , խօ-
սելու այս անգամ , մեր այս կոնդակով այդ
վերջին ատիճանի կենսական խնդրոյն վրայ ,
յիշմէ՛ կախում ունի մեր սիրելի հասարակու-
թեան ընտանեաց երջանկութիւնը , բարգա-
ւաճումը եւ յաւիտեանական վերկութիւնը .
եւ որով պիտի ապահովուի մեր տղայոց ուղ-
ղափառ եւ լուրջ կրթութիւնը :

—Այո՛, Պսակի խորհուրդը Աստուծոյ հաստատուեցաւ հոգիները սուրբ ընկրու եւ ուղղափառ կրօնքի փառքը մեծցնելու համար . եւ որպէսզի մեր կաթողիկէ ժողովուրդը եւ ծնողքը լաւ սորվին եւ իմանան այս ամենակարեւոր գործոյն վերաբերեալ էական կէտերը , մինք պիտի մեկնենք նախ Պսակի Սուրբ Խորհրդոյ բնութիւնն եւ յատկութիւնը . երկրորդ՝ երջանիկ ամուսնութիւն մ'ընելու միջոցները . երրորդ՝ ամուսնութեան պատրաստութիւններու պարտքերը :

Ա. Պսակը խորհուրդ մըն է եկեղեցւոյ որ առն եւ կնիով մէջ սուրբ եւ անլուծանելի միութիւն մը կը կազմէ , եւ երկուքին ալ շնորհք կուտայ Քրիստոնէաբար ապրելու այդ վիճակին մէջ , օրինաւոր զաւակներ ունենալու եւ այն զաւակները Աստուծոյ շնորհքին եւ երկիւղին մէջ մեծցնելու : Յիսուսէ առաջ ամուսնութիւնը խորհուրդ չէր . այլ ընական եւ քաղաքական դաշինք մը միայն . այսու ամենայնիւ , միշտ կրօնական ձեւ եւ զրոյժ ունէր սկիզբէն , ինչպէս կը կարդանք Սուրբ Գրոց մէջ երբ Աստուած օրհնեց զԱդամ եւ զԵւա եւ ըսաւ . Աճեցէ՛ք եւ բազմացա՛րուք : (Ծննդ . Բ .) Սակայն Տէրն մեր՝ Իսուս Քրիստոս այս պարզ գոյշինքը բարձրացուց նաեւ խորհրդոյ արժանապատուութեան եւ այն ընական միութիւնը՝ ամուսնացողներու համար՝ երկնային եւ հողեւոր շնորհաց աղբիւր մ'ըրաւ : Ասի հաւատոյ մաս է : Այսպէս կը սորվեցնէ Տրիտ . Ժող . ք (Նիստ . 24 Կ . 1 .) «Եթէ մէկ մը ըսելու համարձակի թէ Պսակը Քրիստոսէ հաստատուած Աւետարանական օրէնքին ճշմարիտ եւ մասնաւոր եօթն խորհուրդներէն մին չէ , այլ Եկեղեցւոյ մէջ մարդկային հնարք մըն է , եւ շնորհք ալ չի կրնար տալ , անաթեմայ նշովեալ ըլլայ .» եւ Պօղոս Առաք . Պսակի վրայ այսպէս կը խօսի . «Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ Տիառն՝ զի այդ է գլուխ կնոջ , որպէս եւ Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ եւ ինքն է փրկիչ մարմնոյ , (Եփես . Ե . 23-25) ,—եւ զարձեալ : «Խորհուրդս այս՝ մեծ է բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յԵկեղեցի» Անդ 32 . —այս խօսքերով սուրբ Առաքեալը

պսակի խորհուրդը ասոր համար մեծ կ'անուանէ , որ ամուսնացեալներու միութիւնը Յիսուսի իւր սուրբ Եկեղեցւոյ հետ միութեան օրինակն է , որով սուրբ խորհուրդ է :

Պսակի խորհրդոյ նիւթն է երկու պսակուողներու փոխադարձ հաւանութիւնը . Պսակի ձեւն ալ այն հաւանութիւնն արտաբերող խօսքերն կամ նշաններն են : Ասկից կը հետեւի որ այս խորհրդոյ պաշտօնեաներն են երկու պսակուողներ . սակայն սուրբ Եկեղեցին անհրաժեշտ կը պահանջէ որ ժողովրդապետը ներկայ գտնուի սլաւիկ օրհնութեան . որպէս զի օրհնէ այս միութիւնը , անոր սրբութիւնը ապահովցնէ եւ անի արձանագրէ :

Քանի որ Պսակը այսպէս Աստուածային հաստատութեամբ խորհուրդ մըն է , երեք յատկութիւն պէտք է ունենայ . աշխնքն , Սրբութիւն , Միութիւն , Անլուծանելիութիւն :

ա. Սրբութիւն .—Ամենատոյգ է որ Պսակը սուրբ է . հերետիկոսներէն ոմանք համարձակեցան Պսակը սոսկ մարդկային գործ մ'անուանելու : Սակայն յայտնի է որ Պսակը Աստուած ինքը հաստատեց զբախտի մէջ եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս անի խորհրդոյ աստիճանին բարձրացուց , ուրեմն սուրբ է . բայց ասկէ չի հետեւիր որ ամէն մարդ ամուսնանալու պարտաւորուած ըլլայ . քնաւ երբեք . կուսութիւնը աւելի սուրբ , աւելի կատարեալ վիճակ մըն է . եւ անոնք որ Աստուծոյ շնորհք եւ կոչում ընդունած են ուխտագրութեամբ կուսակրօն մնալու , պարտաւոր են աշխարհքէն հեռանալով կուսութեամբ ապրելու : Որովհետեւ ինք զինք Աստուծոյ նուիրող եւ աշխարհային հաճոյքներէ հեռացող կոյսը՝ անշուշտ Աստուծոյ ամենահաճելի նուէր մ'ըրած կ'ըլլայ : «Որ ամուսնացուցանէ զկոյսն իւր բարեւոք առնէ , եւ որ ոչն ամուսնացուցանէ՝ լաւ եւս առնէ» (Ա . Կորն . Է . 38 .) Այսպէս վճած է Տրիտդ . Ժող . ք (Նիստ . 24 Կ . 10) . «Եթէ մէկ մը ըսել համարձակի թէ ամուսնութեան վիճակը կուսութեան վիճակէն նախադասելի է , եւ կուսութեամբ ապրիլը՝ ամուսնութենէ լաւագոյն եւ ընտրելագոյն բան մը չէ , նշովեալ ըլլայ :

բ. Միութիւն. Այո՛, Պսակի միութիւնը պէտք է . որ կը պահանջէ թէ Պսակի շնորհաց տակ ապրին միեւնոյն այրը միեւնոյն կնոջ հետ , եւ հետեւապէս արգիլեալ է միա-
ժամանակեայ բազմակնութիւնը : Մովսիսական օրինաց մէջ թոյլատուութիւն եղաւ բազմակնութեան . սակայն Տէրն մեր Յիսուս Քրիստոս սուրբ Աւետարանի օրէնքով արգիլեց զայն . եւ Պսակի խորհրդոյն տուաւ իրր էական թէութիւն իւր նախկին Միութիւնը : Այս պատճառաւ Տրիտ՝ ժող. ը վըճում է , (Նիստ . 24 . Կան . 2 .) եթէ մէկ մը ըսելու ըլլայ որ քրիստոնէից թոյլ տրուած է միեւնոյն ժամանակ ամուսիններ ունենալ եւ թէ Աստուածային եւ ո՛չ մէկ օրէնքով ասի արգիլեալ է , « նշուեալ ըլլայ » : Գիտենք որ յաջորդական բազմակնութիւն թոյլ տրուած է , այսինքն երբ պսակեալներէն մէկը վախճանի . այսպէս կ'ըլէ Պօղոս Առաք. « կին կասեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա , ապա եթէ նոյնիցէ այր նորա , ազատ է՝ ում կամիցի ամուսնանալ , բայց միայն Տերամբ » (Ա . Կորնթ . Է . 39) . Դիտելի է որ Յեկեղեցին երկրորդ ամուսնութիւնները այնչափ յանձնարարելի չի համարիր : Պօղոս Առաքեալ յայտնի կերպով կը խօսի այրինիւր համար . « Երանելի եւս է թէ այնպէս կացցէ ըստ իմում խրատու . ես այսպէս համարեմ , թէ եւ յիս իցէ հոգի Աստուծոյ » (Ա . Կորնթ . Է . 40) .- Այո՛ Սուրբ Գիրք եւ Եկեղեցին նախամեծար կը համարին այրինիւրու աշխարհքէն հեռանալը , բայց ընաւ պարտաւորութիւն չին զինք , այլ ազատ կը թողուն . այսինքն ամուսնանալու հրաման կուտան Տերամբ , Աստուծոյ օրինաց համաձայն :
գ .-Անլուծանելիութիւն .-Պսակը անլուծանելի է , այսինքն պսակուողներու միոյն կամ միւսոյն մահը միայն կրնայ լուծել ամուսնութեան կապը : Եթէ մովսիսական օրինաց մէջ ինչ ինչ պարագաներու համար կինը արձակել կամ ամուսնութիւնը լուծել թոյլ տրուեցաւ , ասի եղած է միայն « վասն իրստասարտութեան սրտից նոցա » . (Մատթ . ԺԹ . 8) . « Այլ ի սկզբանէ արարածոց ո՛չ եղեւ այնպէս » (Մատթ . ԺԹ . 8) . Արու եւ էգ

արար զնոսա եւ ասէ , վասն այսորիկ թողցէ՛ բոլր զհայր եւ զմայր իւր եւ երթիցէ ըզհետ կնոջ իւրոյ եւ եղիցին երկոքին ի մարմն մի . արդ զոր Աստուած զուգեաց մարդ մի՛ մեկնեացէ (Անդ . ԺԹ . 6) . եւ ասոր համար Յիսուս Քրիստոս վերադարձուց ամուսնութիւնը իւր սկզբնական եւ բայարձակ անլուծանելիութեան :

Ուրեմն ամուսնալուծումը բացարձակապէս զատապարտուած է սուրբ Աւետարանի օրինօք . սակայն առ ժամանակեայ բաժանումը , ինչ ինչ պարագաներու մէջ թոյլ տրուած է , բայց այդ պարագային մէջ ալ կարելի չէ որ մէկը կամ միւսը նորէն ամուսնանայ ուրիշի հետ , որքան ժամանակ երկուքն ալ կենդանի են : Այսպէս կը պատուիրէ Սուրբ Պօղոս Առաք. « Կնոջ յառնէ մի մեկնել ապա եթէ մեկնեացի , անայր մնացէ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեացի , եւ առն՝ զկին իւր մի՛ թողուլ » (Ա . Կորն . Է . 11)

Այս ամենէն կը հետեւի թէ ընաւ կարեւորութիւն , արժէք չունին այն ամէն կարգադրութիւնները , որոնք կ'ըլլան Կաթողիկէ Եկեղեցւոյ անյղիկ օրինաց հակառակ ո՛ր եւ է ազգային ըսուած , կամ քաղաքական օրէնքներով եւ տրամադրութիւններով , Պսակի էութեան եւ անլուծանելիութեան վերաբերեալ խնդիրներու մասին . վասն զի քանի որ Պսակը սուրբ խորհուրդ մըն է , անի էականապէս ուղղափառ Հոգւմէական Եկեղեցւոյ օրինաց եւ իշխանութեան ենթակայ է : Ուրեմն քրիստոնէի մը համար խղճի պարտաւորութիւն է Պսակի վերաբերեալ ամէն բաներու մէջ Կաթողիկէ սուրբ Եկեղեցւոյ օրինաց եւ կանոնաց համակերպիլ :

Բ . Երջանիկ ամուսնութիւն մը կնքելու համար պէտք եղած միջոցներ :

Մեր այս դժբախտ ժամանակներու մէջ շատ յաճախ կը հանդիպինք թշուառ եւ անհամաձայն ամուսնիւրու . ինչո՞ւ արդեօք . ի՞նչ է պատճառը պսակելոց մէջ յառաջ եկած այնչափ դժբախտութեանց եւ ողբալի անհամաձայնութեանց : Լսեցէք պատճառը : Որովհետեւ այս ամուսնութիւնները եղած են շատ մեծ թեթեւութեամբ առանց ան-

դրադառնալու եւ առանց մտածելու թէ այն սուրբ Խորհուրդ մէջ, եւ գուցէ սոսկ աշխարհային նպատակներով եւ դիտումներով: Ձեզի կ'ուզեմք խօսքերն իս, սիրեցեալ հոգեւոր որդեակք, երիտասարդներ, օրիորդներ, կ'ուզէք երջանիկ ըլլալ Պսակի խորհրդոյ ներքեւ: Ահա սուրբ Եկեղեցւոյ կողմանէ ձեր էական բարւոյն համար հետեւեալ խորհուրդները ձեզի տալու չենք քաշուիր:

1. Քննեցէ՛ք զՁեզ, արդիօք այս ամուսնական վիճակի կոչում ունի՞ք: 2. Լա՛ւ քրէք անձի ընտրութիւնը, 3. Ձգուշութեա՛մբ պատրաստուեցէ՛ք Պսակի սուրբ խորհուրդը ընդունելու:

1. Կոչում ամուսնութեան համար:

Առանց կոչման անկարելի է յաջողիլ որ եւ իցէ վիճակի մէջ: Հապա ի՞նչպէ՞ս ճանչնալու է ամուսնական վիճակի կոչում ունենալը: Ամէն բանէ յառաջ, ազօթելու է Աստուծոյ. վասն զի որ եւ իցէ կարեւոր գործ մը առանց ազօթքի որոշելու չէ բնաւ: Միթէ Աստուած չէ՞ որ ըստ Սուրբ Գրոց, մարդու բարի ամուսին կուտայ: Ծնողք տուն եւ հարստութիւն կուտան զաւակներուն. այլ կի՛նը Աստուած ինքը կ'ընտրէ. «Չտունս եւ զստացուածս բաժանեն հարք որդւոց, եւ ի Տեառնէ պատշաճի կին առն: (Առակ. ԺԺ. 14.) Ազօթքէն ետեւ խորհրդակցելու է ծնողաց հետ, վասնզի անոնք իրենց փորձառութեամբը ծանօթութիւն ունին այս բաներու մէջ, եւ միայն անոնք կրնան լուսաւորել իրենց զաւակաց միտքը: Այսու ամենայնիւ եթէ ծնողք բացարձակապէս իրենց շահիրու, փառասիրութեան, ազահութեան եւայլն կիրքերու հետեւին իրենց զաւակաց ամուսնութեան խնդրոյն մէջ. չափահաս անձի մը համար ներելի է անոնց խորհուրդներու չհետեւիլ. սակայն այդ պարագային ալ առ ծնողս պարտաւոր եղած յարգանաց մէջ թերանալու չեն երբէք: Վերջապէս խղճամբոտ եւ սուրբ խոստովանահօր մը խորհուրդին կրնան դիմել. անի ծնողացմէ անչահախնդիր է, եւ իւր խորհուրդը խնայողութեան վրայ հիմնուած է. «Խորհուրդ յամենայն մարդոյ խնդրեացես. մի՛ արհամար-

հեացես զամենայն խորհուրդս պիտանեաց» (Տովբիթ Դ. 19).

2. Անձի ընտրութիւն:

Երբ յայտնի ըլլայ ամուսնանալու կոչումը, այն ատեն պէտք է ընտրել այն անձը որու հետ կ'ուզուի ամուսնանալ. եւ այս ընտրութեան մէջ չսխալելու համար խոհեմութեան կանոններու պէտք է հետեւիլ: Որովհետեւ այս միութիւնը եւ այս ամուսնական վիճակը առ ժամանակեայ չէ, այլ մշտնջենաւոր միջնակ է մահ, եւ բնաւ զատուելու եւ ուրիշի հետ ամուսնանալու հնար չկայ. ո՛րչափ կարեւոր գործ. եւ ո՛րչափ իրաւունք ունի Ս. Եկեղեցին այսպիսի խնդրոյ մը մէջ իւր զաւակներուն խոհեմութեան կանոններ տալու եւ զանոնք հրահանգելու: Մտի՛կ ըրէ՛ք, Սիրեցեալ՝ Որդեակք, ինչ որ Սուրբ Եկեղեցին ձեր երջանկութեան համար կը սորվեցնէ ձեզի այս մասին, իւր հազարաւոր տաճրներու փորձառութեամբը:

Մի ընտրէք կրօնով, վասն զի գեղեցկութիւն եւ մարդկային մարմնոյ վայելչութիւնը չատ չուտ կը թառամի եւ անոր կը հետեւին զժգոհութիւնք: Այսպէս կը սորվեցնեն Սուրբ գիրք: «Մի հայիր ի գեղ կնոջ, եւ մի փափիր» (Սիր, 26). եւ բանաստեղծ մը ըսած է. «Շատ ցանցառ է որ գեղեցկութիւն եւ պարկեշտութիւն ի միասին գտնուին մէկ անձի վրայ:»

Մի ընտրէք փառասիրութեամբ. մարդ մը որ կ'ամուսնանայ կնոջ մը հետ անոր հարստութեան պատճառաւ, կ'ըսէ Սուրբ Յովհան Ոսկեր., աւելի տիկին մը կ'առնու, քան սուրբ խորհրդով կենաց ընկեր: Դարձեալ Սուրբ Գիրք կ'ըսեն. «Բարկութիւն եւ լըրութիւն եւ ամօթ մեծ, կին եթէ հրամայնատար լիցի առն իւրում:» (Սիր. իէ 28):

Ուրեմն պէտք ընտրել առաքինի անձ մը. որովհետեւ առաքինութիւնը հարստութենէ եւ գեղեցկութենէ շատ աւելի պատուական է, եւ ընտանեայ մէջ երջանկութիւն յառաջ կը բերէ: Այս մասին զգուշաւոր քննութիւն մը ո՛չ խիստ պէտք է նկատուի ոչ ալ չափազանց:

(Շարունակելի)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒՆ Ի ԶՄՄԱՌ

Ի Ե Ե Ի Զ Մ Մ Ա Ռ

(Շար.)

ԶՄՄԱՌՈՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ.—Արդէն Ամեն . Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ եւ միանգամայն բոլոր միաբաններուն ուշն ու ուրուշը գրաւած է միշտ Ընծայարանը : Ամեն ժամանակի Պատուրիարքներն ալ իրենց հոգածութեան նիւթը բռնած են Ընծայարանին ուսումնական մակարդակը բարձրացնել , ըստ կարի աշակերտաց թիւը բազմապատկել , որով Միաբանութիւնն իսկ ծաւալի : Կարելի չէր ուրեմն որ Ամեն . Թերզեան Կթղկա . Պարք . ի ուշադրութենէ վերադէպ այս Ընծայարանին ուսուցչական եւ վարչական մարմինը կազմակերպելու հոգն ու խնամք : Բիւր զժողովութեանց գլխաւորելով , թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական զոհողութիւններով հարկ եղաւ դասատուներ հայթայթել , գրել միաբանից որ աճապարեն ուսումնական նոր տարւոյն սկիզբները ժամանելու : Փառք Բարերարին որ թէ ոչ բոլորը՝ զոհէ բաղձանքներուն ամենամեծ մասը կատարուելով , զարոցի դատաւանդութիւնք սկսան ժամանակին եւ կը շարունակուին : Մօտաւոր միաբանները ժամանեցին , հեռաւորները ճանապարհի զժողովութեանց յաղթել անկարելի ըլլալով կը խոտաւանան առաջին պատեհիւ գալ : Դասերը ըստ սովորութեան անցեալ ուսումնական տարւոյն պէս սկսան , կարգապահութիւնը ամեն կողմ կը տիրէ : Զանգակները ճիշդ ժամերուն կը ձայնեն մերթ դասերու , մերթ աղօթքի եւ մերթ ճաշելու եւ հանգստեան : Առաւօտները՝ երեկոները ամեն օր ժամերգութիւնք ջերմոսնութեամբ եւ լուրջ կարգակատարութեամբ կ'երգուին : Ամեն կողմ խորհրդական լռութիւնը կը տիրէ . երբ թիւ Պատարագներ սկսին եւ խումբ խումբ նորոնծայք մերձեան Սուրբ Խորհրդոյն , որ հոգեւէր չի ըզմայլի չի յուզուիր , չի գոչեր Սաղմոսերգութն հետ . որպէս զի գեղեցիկ են յարկի բն Տէր զօրութեանց , ցանկալ եւ փափաքեալ անձն

իմ ի գաւիթս բո» : Մեղք որ այս ապագայ առաքեալներուն թիւը այս տարի չպիտի աւելնայ չատ :

ԶՄՄԱՌԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ.— Կաթողիկոսական Աթոռը եթէ երբէք ունի բարոյական այժմ , հաստատութիւն մը որով կարող ըլլայ նորանոր առաքելութիւններ բանալ , քահանայի կարօտ Եպիսկոպոսաց օգնել քահանաներ հասցնելով , այն ալ Զմմաւան Միաբանութիւնն եղած է : Միաբանութիւն մի որ ստաքելութիւններ բացել , կարգադրել , կազմակերպել եւ Կաթողիկոսական Աթոռոյն ազատ տրամադրութեանը թողել է :

Կը մաղթենք Աստուծոյ՝ որ իւր օրհնութիւնը հեղու զեղու այս սուրբ Միաբանութեան վրայ , որուն նպատակն է հայ ժողովուրդը դնել կրօնական , ընդարձակ , ընդհանրապէս կաթողիկէ հասարակութեան հետ զարգայման մակարդակին վրայ , Եւրոպայի Ամերիկայի , եւ բոլոր աշխարհի կաթողիկէ ժողովրդեան հետ մաքուր զուտ Հայ սուրբ Հայրապետաց հոգւոյն հետեւելով կաթողիկէ սկզբունքներով վերաբերուել , իմ մասին իսկ բիւր շնորհակալութիւն այն հիւրասիրութեան համար զոր տեսայ հոն գրոտուող միաբաններէն . մանաւանդ Արհ . Կիւրեան Արքեպ . եւ Գեր . Աղեքսանդրեան Գերապայճառի քաղցր վերաբերումներէն անմոռաց յիշատակներով լեցուն է երեւակայութիւնս . « Ծեւ ի ցանկե Բուժմե մի պակասեցի » . փորձառու ծերեր անպակաս ըլլան այս Ս . յարկաց ներքեւ :

ԶՈՒ—ՈՐՈՇԱԾ ԷՒ արդէն մեկնիլ ընդ փոյթ . գրեթէ երկու ամիսներ հեշտիւ անցեր էին : Յոյ . Յին առաւօտ երկու կառք վանքին դրսն առջեւ կը սպասէր նախընթաց օրէն ի վեր վերջին մնաց բարոյներու արարողութիւնք կատարուած էին Սեղանատունը եւ Դպրոց :

Շատ բնական կերպով եւ յաջողակութեամբ կատարուած էին ներկայացում , ձօներ եւ այլն , եւ այլն : Պէյրութի Յիսուսեանց դպրոց երթալիք տղայք պատրաստ էին : Առաւօտ Ս . Պատարագներու մատուցումէն յետոյ բոլոր վանականք մեզ յուզարկեցին հետս ունէի վանքին որ Մեծաւորը Գեր . Ա .

չրգեան Գրիգոր Ծ. վարդապետը զոր ներկայացնել հարկ էր Վսեմ. Առաքելական Նուիրակին, որուն վերջին հրաժեշտ մը տալու պարտաւոր էի: Կառքերը սահեցան ընդփոյթ. այս ամեն հրաժեշտի եւ ներկայացնելու զործեր կատարուեցան: Մեկնեցանք նոր մեծաւորէն ալ: Այլ Մարոնեաց Պատրիարքարանին իսկ հրաժեշտ մի, եւ դարձանք ի Պէյրութ, ուր մեզ կըսպասէ Գեր. Նէսիմեանը: Տեղաւորեցինք հոն Յիսուսեանց քով տղաքն ալ, եւ մեր պաշտօնատեղին փութացինք, ուր հասնելու համար թէպէտ ցուրտի եւ անձրեւին պատճառաւ բաւական նեղուեցանք, սակայն մեզ համար աղօթողներու շնորհիւ կըրցանք ողջ առողջ տեղերնիս հասնիլ:

Տէրը յաջողութեամբ պսակէ այն ամեն գաղափարները զոր Գերջ. Հոգեւոր Տէրը կը տանէ Միաբանութեան յառաջադիմութեան համար:

Բերիա, 3 դեկտ. 1912

Մեծաւ հաճութեամբ տպեցինք այս գեղեցիկ տեղեկագիրը զոր բարեացակամութեամբ դրկած էր մեզ Արհի. Օգոսթինոս Արք. Սայեղեան՝ վիճակաւոր Բերիայ, որ անցեալ աւան Կարողիկոսական այցելու կարգուելով Ջմաւոռու Վանքին աշխատեց լրջօրէն եւ զգօն իմաստութեամբ կատարեց իւր տոյն կարիքափութի եւ օգտուեալ պատճենը, եւ արժանացաւ թէ՛ Ամեն. Տեառն եւ թէ՛ Ջմաւոռեան Միաբանութեան խորին շնորհակալութեանց: Միանգամայն յուսանք թէ Ն. Արհիպապատուօրէն պիտի ներէ մեզ իւր Տեղեկագրին հրատարակութիւնը առ անակնկալ պատճառաց փոքր մի յապաղած ըլլալնիս:

ՆԱ. ԽՄԲ.

ՕՐՄԱՆԵԱՆԻ

ՅԱՅՈՅ ԵԿԵՆԵՅԻ, ԳԻՐԲԸ (•)

(Շար.)

Անօղուտ է կեղծել. էջմիածնական եկեղեցին Բողոքականութեան յարձակումներու եւ հոսանքին դէմ տեղի տուած է գահավի-

ժարար, որովհետեւ չունէր ինքնիրմէ անոր դէմ դնելու ոյժ. կրնար Կաթողիկէութեան սկզբունքներով անոր առջեւ առնուլ. չունի. հարկ էր ուրեմն որ հասնէր այս աւանդութի որուն մէջ Օրմանեան կ'ուզէ զուարճացնել իւր եկեղեցին՝ կարծել տալով անոր թէ նա Լուստերէն առաջ լուստերական, արդիականներէ առաջ արդիական եղած ըլլայ: Եւ տեսէ՛ք ի՞նչ զուգորդութիւն գաղափարներու. Արդիապաշտներն ալ եկեղեցւոյ ընդհանրացման ու միութեան միակ հիմնական կէտ կը քարոզեն իրենց սկզբունքներն, որով աւելի նուրբ իմաստով եւ ձեւի տակ Օրմանեանի Հայոց եկեղեցւոյ մէջ մակադրած սկզբունքներն կը կանխեն: Աւելի բարոյական քան վարդապետական, աւելի անհատական ու ազատ՝ քան անհատն անկախ նոր քրիստոնէութիւն մը, որ խտացնէր իւր մէջ անցեալ բոլոր դրական կրօնքներն եւ ըլլար կանոնաւոր արտադրութիւն անցեալ ժամանակի կրօնքներու, շարունակութիւն եւ տարածութիւն կրօնական յեղաշրջումի. ահա Արդիականաց ձեւած եկեղեցին, որուն վերջնական միութիւնը պիտի ամփոփէ: Բառին ճիշդ իմաստով՝ Կաթողիկէ եկեղեցւոյ յօրինուածքը (Արդիապաշտի յայտարարութիւն) եւ անոր հասնելու համար «եկեղեցւոյ մէկ հասիկ նամբայ մնացած է» — իրենց ծրագիրը, որ Օրմանեանի Հայ եկեղեցւոյ փոխօրոգական ուրուագիծն կրնայ նկատուիլ: Եւ իրօք, Արդիապաշտներն ալ կ'ըսէին թէ կըրօնք, եկեղեցի, դաւանութիւն, յեղաշրջում եւ փոփոխականութեան ենթարկելու է, որովհետեւ «Ո՛չ մի բան փոփոխականութեան օրէնքէն ազատ չէ», լսեցինք Օրմանեանի ջատագովի բերնէն: Օրման հոսանքը կը պահանջէ՝ «ժամանակակից խղճմանաց քրքուցումին ներդաշնակ» քալել եւ այդ թրթռացումներն իսկ ուրիշ բան չեն, բայց եթէ օրման ազատականութեան կրօնքի վերայ գործած տպաւորութիւններն, որոնց բնական հետեւանք են կրօնական թուլատրութիւն եւ ազատամտութիւն, ահա երկու հիմնականներն միութեան ըստ Օրմանեանի եւ ըստ Արդիապաշտից: Եւ այս տեսակ միութե-

(•) Տես, թիւ 77, էջ 23:

Թեան համակերպելու է, կ'ըսեն Արդիա-
պաշտք, նաեւ կաթողիկէ Եկեղեցին, վասնզի
«Մարդկային հաւաքական խիղճը ինչպէս
անհասականը, իր այժմեան պատմութեան
մէջ երկու վայրկեան իսկ չունի որ համար-
ժեք ու նման ըլլան... գոյութիւնը հիմա շար-
ժում է», որ ըսել է ռամկորէն այժմեան մար-
դը խելակորոյս մ'է, որ մէկ գաղափարի վը-
րայ չի մնար ու կը փոխուի յարատեւ: ու
որ չի փոխուիր, քիչ առաջ ըսածը չի ստեր,
մտածածը չի հերքեր, երկրորդի, երկրորդ
չըլլար, չխաբեր ու չի խաբուիր, օրուան
մարդը չէ: Հնաւանդ մնալ, սկզբունքի մը
փարիլ եւ անով միակերպ ընթանալ, արա-
մաբան ըլլալ, ճշմարտախօսութիւնը սիրել,
անկեղծ ու միամիտ հոգւով փնտռել ճշմա-
րիտն ու բարին, միջնադարեան մարդու
գործ է: հիմայ հարկ է փոխուիլ, շարժիլ
հողմացոյցի պէս. դարձն ի հնութիւն կը ցա-
քեցունէ զմարդ, ընկերութիւն եւ Եկեղեցի:
Ահա կրօնական թուլատրութեան, անխրո-
րականութեան թելադրիչ սկզբունքներն.
որքան մարդավայել են... այսու հանդեպ
միջնորդներ վերցնելու, պառակտումներն
դարմանելու, վիհեր լեցնելու, բաժանումներ
կարկտնելու սկզբունքներ կը համարուին:
Կաթողիկէներն այսինքն Եկեղեցւոյ հընա-
զանդ որդիներն «Կորուսած են անձնական
պատասխանատուութեան ու արժանապատու-
ութեան ամենասարբական զգացումը», վա-
սնզի կապուած են ճշմարտութեան եւ իշ-
խանութեան մնայուն ու անփոփոխ ըսկըզ-
բանց: ճշմարտութեան ընծայուած հաւատ-
քը, իշխանութեան հնազանդութիւնը «բա-
նաւոր ու դասող հպատակութիւն մը ըլլալու
էր եւ ո'չ «անպատասխանատուներու անգի-
տակից պարտութիւն մը»: Այժմեան հոգւոյ
վրայ ուրեմն ձեւելով ժողովրդեան վերաբե-
րումն Եկեղեցւոյ հետ. հարկ է ասոր իշխա-
նութեան տեղ դնել անհասական պատաս-
խանատուութիւնը, որ ամեն բան ըսել է՝ կը-
րօնք ու անկրօնութիւն, հաւատք ու ան-
հաւատութիւն, սուտ եւ ճշմարտութիւն, սխալ
եւ ուղղութիւն, մէկ խօսքով, Այո՛ եւ ո'չ:
Ահա Արդիապաշտից սկզբունքներն, որ միու-

թեան հանդուց կը քարոզուին, թո՛ղ մերձեցը-
նեն ընթերցողք Օրմանեանի Հայ Եկեղեցւոյ
սկզբունց, զորս արժանի կը կարծէ նա կը-
րօնքներու միութեան հիմնակէտ ըլլալու:
Դիտմամբ Արդիականաց ծրագրէն քաղեցինք
ցիր ու ցան գաղափարներ, որպէսզի ցու-
ցնենք անգամ մ'ալ թէ Արդիականութիւնը
որքան գործնականօրէն ծածկուած զրութիւն
մ'է, որ հայ լրագրութեան ու տպագրութեան
առհասարակ ուղ եւ ծուծը կը կազմէ: Այս
այսպէս ըլլալով, դարմանալու չենք երբ կը
տեսնենք ամէն գրիչ հաւատքի ու կրօնքի
պատգամաւոր դարձած, ամէն անհատ լինք-
նիրեն նոր կրօնքի հեղինակ, կաթողիկէ վար-
դապետութեան քննադատ. դարմանալու
չենք երբ կը պահանջուի Եպիսկոպոսներէ ու
քահանաներէ ժողովուրդի հաւաքական ու
անհատական պահանջներուն առջեւ մոռնալ
իրենց իշխանութիւնը, կարգն ու անտիճա-
նը, հաւատքն եւ առ Եկեղեցւոյ հաւատար-
մութիւնը, գերագոյն զլիսոյց հնազանդելու
պարտքը. երբ կաթողիկէ նուիրապետութեան
կ'առաջարկուի Օրմանեանի Հայ Եկեղեցւոյ
սկզբունքներն հիմնակէտ նկատել մեր եկե-
ղեցական ու հասարակական բարեկարգու-
թեան: Ո՛րքան յարմար կը դառնայ հոս Պօ-
ղոս առաքելոյն գրածն առ Կորնթացիս. «Աս-
տուծոյ որդին Յիսուս Քրիստոս... Այո՛ եւ Ոչ
չեղաւ. այլ միայն Այո՛ եղաւ ի նիւթն. վստն
զի Աստուծոյ ստեղծութեան յայնմ Այո՛ եղան»:
ըսել կ'ուզէ Առաքեալը, Քրիստոս հակա-
սութեանց խճողում մը չէ, հետեւաբար
միանգամայն Այո՛ եւ Ո՛չ եղած չէ եւ՝ մեր-
ժելով ու հաստատելով հակառարար միեւ-
նոյն բանը, անոր համար Քրիստոսէ զրուած
առաքելական վարդապետութեանն ալ Այո՛ն
Այո՛ է եւ Ո՛չն Ո՛չ. «հաւատարիմ է Աստուած
զի բանն մեր ու առ ձեզ եհաւ ո'չ է Այո՛ն եւ
Ո՛չ» հապա «Եղիցի Այո՛ն Այո՛ եւ Ո՛չն Ո՛չ»: Ահա
միութեան միակ բանաւոր հիմնակէտը, որ Ար-
դիապաշտից ու Օրմանեանի խղճի խայթ
տալու է թէ բխցած չէ խղճերնին:

Բայց ո՛չ Արդիապաշտից, ո՛չ Օրմանեա-
նի միտքն միութիւն փնտռել չէ, այլ ազա-
տամտութիւնը եւ հակասութիւնը կրօնքի

մէջ արդարացնելու հնարք մը, որ փաղաքէ տօրուան հասանքը. սակայն այս տարբերութիւնը կայ Օրմանեանի ու արդիապաշտից մէջ որ ասոնք փիլիսոփայական դրութիւն մը կը ներկայացնեն միութեան այն ձեւն, զոր նա իր Հայ Եկեղեցւոյն կը սեփականէ՝ իբր անոր բնորոշ նկարագիր: Այսպէսով ազատութեան առաջ բերած արբեցութեան միջոցին կը մատակարարէ Հայ Եկեղեցւոյն մահացու թոյն մը, շոյելով զայն եւ շողորթութելով թէ այդ դեղով այդ Եկեղեցին ինքիրմէ մեծ պիտի ըլլար՝ տիեզերական միութեան հիմնակէտն ըլլալու չափ: Որքան կը պատշաճի Օրմանեանի գրքին ինչ որ հեղինակ մը կը գրէր Արդիապաշտից դրութեան համար «ծածկուած բոյն մի է նա, որուն առաջին արդիւնքն կ'ըլլայ ինքնիրով գինովցնել զայն խմողն, որուն ազատութեան, նորութեան, բարմութեան ողորդիչ զգացումը ազդելով խաղաղիկ կ'ընէ բարոյական գերութեան եւ մտային ծերութեան, այն ամեն հին սխալներու սերունդին որունց գիրքը կը նետեան զորս անհաս ու ընկերութիւն» եւ մեծ պիտի ըսենք այնու իւր Եկեղեցին: Վասն զի Օրմանեան իր Հայ Եկեղեցին այնքան մեծաբանելով այն բանաստեղծին երգիծանքը կը նորոգէ որ իւր գերիներուն՝ ի պատիւ իրենց գերութեան՝ ազատութեան երկը երգել կուտար. ցաւալի՜ դուարձութիւն:

(Շարունակելի)

Մեակ քերթն կ'արտասպենք հետեւեալ կտորը,

Հ Ո Գ Ե Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Զորեքշարթի, նոյեմբերի 21ին, հայ կաթողիկոսներ աղօթատան մէջ կատարվեց հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ հ. Ղեւոնդ Ալիշանի մահի տաճարում անկեղծով:

Ինչպէս յայտնի է, հայ գրականութեան նահապետ Ալիշանը վախճանվեց 1904 թ. նոյեմբերի 21ին, եւ մահվան տաճարակը լրացաւ անցեալ 1911 թ. նոյեմբերի 21ին. սակայն ինչպէս բացատրեց «Մշա-

կի» մէջ Դիոնէսիոս վ. Գաղատեանը, անցեալ տարի անհնարին եղաւ կատարել հոգեհանգիստ:

Պատարագին էր հայ կաթողիկոսների գերապայծառ առաքելական կառավարիչ Սարգիս վարդապետը, եպիսկոպոսական զգեստով: Աղօթատունը լցված էր ոչ միայն հայ-կաթողիկոսների խառն բազմութեամբ, այլ եւ լուսաւորչական, բողոքական հայերով. կային եւ օտարազգիներ: Երգեցիկ երկսեռ խումբը երգեց պատարագը ներդաշնակ, խոր տպաւորութիւն թողնելով հանգիսականների վրա:

Պատարագից յետոյ հոգեհանգիստը կատարվեց աղօթատան կից մեծ դահլիճում, ուր սեւածածկ սեղանին վրա դրված էր խաչ, աւետարան, նիւս եւ Ալիշանի մեծ պատկերը, շրջապատուած ծաղիկներով եւ պսակներով:

Հոգեհանգիստեան կարգը կատարեց գերապայծառ առաքելական կառավարիչ Սարգիս վարդապետը այլ հոգեւորականների հետ: Ներկայ էին հայ հասարակութեան զանազան խաւերի, գրականութեան եւ մամուլի ներկայացուցիչներ, որոնք եկել էին առանց դաւանութեան խտրութեան յարգանք մատուցանելու մեծ մարդու յիշատակին:

Հոգեհանգիստի վերջում առաքելական կառավարիչ Սարգիս վարդապետը մի գեղեցիկ եւ զգացմունքաւոր խօսեց, նկարագրելով Ալիշանը իբրեւ կրօնաւոր, իբրեւ հայրենասէր եւ իբրեւ մատենագիր: Տուով շատ ճիշտ կերպով Ալիշանի նկարագիրը այդ երեք առկարէզներում, նա ուրախութիւն յայտնեց, որ նրա յիշատակը յարգելու եկել են եւ ոչ-կաթողիկ հայերը, տեսնելով Ալիշանի մէջ հայութեան նշանաւոր գործիչ եւ հայրենասէր:

Գերապայծառի ատենարանութիւնը թողեց խիստ հաճելի տպաւորութիւնը եւ ցոյց տուեց, որ յունձին Սարգիս վ. Տէր-Արքայապետին՝ Ռուսաստանի հայ-կաթողիկոսների համայնքը ունի խելացի եւ արժանաւոր առաջնորդ, պաշտպան ազգային համերաշխութեան դադափարին:

Ապա հանգիսականների կողմից մի քանի խօսք ասաց «Մշակի» եւ «Արօրի» խմբագիր Հ. Առաքելեան:

«Առաքելական կառավարիչ գերապայծառ Սարգիս վարդ.ի պերճախօս ատենաբանութիւնից յետոյ, ասաց նա, —ինչ շատ քիչ բան է մնում ասելու հ. Ղեւոնդ Ալիշանի մասին: Ճիշտ է, նա 10 տարի առաջ գերեզման իջաւ եւ անհետացաւ մեր աշխարհից. բայց միթէ նա այլեւս չը կայ. ոչ. նրա հոգին տաւառում է ազատն Մասիսի բարձունքից, որի վեհութիւնը նա երգեց: Եթէ մեր պատմութեան հին դարերում հայութեան ամենախաշոր գէմքերը եւ սրբանքը կազմում էին Ներսէս Մեծն, Մեսրոպ Մաշտոց, Սահակ, Մովսէս Խորենացի. եթէ մեր պատմութեան միջին դարերում հայութեան ամենախաշոր գէմքերն էին Ներսէս Շնորհայի, Ներսէս Լամբրոսացի, Գր. Նաւրեկացի, ապա ոչ մի տարակոյս չը կայ, որ նորագոյն դարերի, 17րդ, 18րդ եւ 19րդ դարերի հայութեան ա-

մեծախառնոր գէտքն է հանդիսանում հ. Ղեւոնդ Ալիշանը: Նա երգեց հայրենիքի վիշտը. բայց և նա եղաւ, որ փլատակներն, աւերակների տակից հանեց Մայր-Հայաստանը և իր գործերով, երկերով ներշնչեց հայութեան և Հայաստանի հոգեւոր բարոյական փերածնութեան յոյսը: Եւ ահա այսօր այդ հոգեպահան գէտքն է մէր առաջ կանգնած. ահա այսօր եկել ենք խոնարհելու և երկրպագելու նրա պաշտելի յիշատակի առաջ: Մաղթենք որ նահապետ Ալիշանի հոգով և հոյրենասիրութեամբ, գոնէ դոյզն չափով, տոգորվեն մեր ապագայ սերունդները և մեր ժամանակակից գործիչները: Յաւիտենական յիշատակ Հ. Ղեւոնդ Ալիշանին»:

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Յունուար 26 † Կիր. դժ.

27 Բշ. դկ. Պիոնի ֆհմ. եւմ.

28 Դշ. աժ. Ղեւոնդեանց

29 Դշ. ակ. Պաւոց

30 Եշ. քժ. Վարդանանց

31 Ուրբ. քկ. Պաւոց

Փետրուար 1 Եր. գժ. Կ. Պոլսի Ս. Ժողովոյն

Ս. ՎԱՐԴԱՆԱՆԻ.— Հայ ազգին ու եկեղեցւոյն գերապանծ փառք՝ մեծն Վարդան, թողն էր Ս. Սահակայ Պարթեւի, անոր Սահականոյ աղջիկէն, որդի Համոգասպայ Մամիկոնէի: Երբ Արշակունեաց տոհմէն ջնջուեցաւ թագաւորութիւնը, Վարդան փոքր թէոքոս Կայսրէն սպարապետ կարգուեցաւ Հայաստանի վրայ: Ինքն էր յոյժ աստուածապաշտ, բարի, առաքինի և արիւսիրտ, և այս առաքինութեանց կը միացնէր մեծ իմաստութիւն և զգոնութիւն: Այն ժամանակները Պարսիկ արքայից աշքոյն Յազկերտ, որդի Վառամայ, յաղթած ըլլալով Յունաց Կայսեր, մտաբերեց ոչ միայն աշխարհակալել, այլ և ջնջել Քրիստոնէութիւնը և ընդհանրացնել մոգութեան կրակապաշտ գէներ: Հայոց աշխարհէն մատնութիւն ըլլալով իրեն Վասակայ փեսայ՝ Վարդավազանի ձեռքով, Յազկերտ 442ին հրովարտակով մը հրաւիրեց Հայոց մեծամեծներն ու բանակը ընդգէմ Ալանաց պատերազմելու համար, որ տեւեց 7 տարի: Մեծ խարեութեամբ կ'ուզէր զանոնք ուրացնել. բայց երբ չյաջողեցաւ իր դաւաճան մտքին մէջ, յայտ յանդիման հրովարտակ հանեց ամբողջ Հայաստանը կրակապաշտ ընելու, և զրկեց Դենշապուհը

որ չաւաշտը կը տանջէր բոլոր քնակիչները: Իսկ Նախարարները սպառնալեզ արգիլեց ի Տիգրոն արքայանշնաւ քաղաք: Ասոնք երբ տեսան թէ ուրիշ ճար չըկայ, ներքինեայ մը չար խորհուրդով առ երեսունգունի կեղծելով մոգութիւնը, դարձան ի Հայոս Պարսկաստանի և Հայաստանի բոլոր Քրիստոնէաւոր սուգով ու կոծով լեցուեցան: Սակայն Հայ նուիրապետութիւնը և հաւատացեալ ժողովուրդը քաջաբար դէմ դրաւ մոգութեան գունդին և քաջն Վարդան սուրբ Յովսէփայ Կաթողիկոսի և Ս. Ղեւոնդի առաջնորդութեամբ բոլոր Նախարարները զուգարկով ի Եւֆրատի վանք իր տպարանքը, երգմամբ միարանեցան պաշտպանել սուրբ կրօնքը եւ Ծաղկեալն գաւառին մէջ ցիր ու ցան բրին մոգութեան բանակը եւ ձերբակալեցին զՎասակ, որու սուտ երգումներուն հաւատք ընծայելով, դարձեալ ընդունեցին զինքը, եւ այս եղաւ պատճառ մեծամեծ աղետից: Որովհետեւ ասկիւրատ մատնիչը արտով ուրացած էր զՔրիստոս և սկսաւ Հազկերտին մատնութիւններ ընել եւ Հայաստանի մէջ կրակապաշտութիւնը տարածել, երբ Վարդան մեծամեծ քաջագործութիւններով կը փախէր յԱղուանս, և սուրբ միարանութիւն կը կընքէր Հոնաց և Վրաց հետ: Յազկերտ ահաւոր բանակ մը զրկեց ի փայտակարան, Միհրանեսէ հազարապետին հրամանին տակ, որ միտաւ տիրանեղ և ուխտազանց Վասակայ հետ Վարդան իրենները ժողովեց յԱրտաշատ, շուրջ 66,000 այր քաջամարտիկ և քալեց Մուշկանդիսպաւուրտի լորսոց դէմ որ Վասակի հետ Հէր և Զարեանդ գաւառներէն իջաւ Արտաշու գաշտը, Աւարայր գիւղին մօտ, Տղմուտ գետին քով: Վարդանայ բանակին մէջ էին սուրբ Յովսէփ Կաթողիկոս, սուրբ Ղեւոնդ Երէց, բազմաթիւ Եպիսկոպոսներ և Փահաններ, որոնք պատարագելով բոլոր զօրքերուն Սուրբ Հաղորդութիւնը բաշխեցին: Զարհուրելի եղաւ ընդհարումը. և Վարդան մեծամեծ նախնիներ գործեց. սակայն Հիթանոսաց բաղմութիւնէն չըջապատուելով, ի սեր փրկչին և Ս. Կրօնից արիւարտ նահատակուեցաւ իրեններուն հետ, որոնց թիւը, պատերազմին մէջ և անկէ վերջը, հասաւ հազար վաթսուս ու վեցի: Այս փառաւոր և յաւիտենապէս յիշատակելի և մեծամեծ արգասեօք բեզուր նահատակութիւնը տեղի ունեցաւ յամին 451, Յունիս ամսոյ 2ին:

ՀՈԳԵՆՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԻ“ ԳՐԲԷՆ

Գիրք Ա.—ԴԼ. Բ.—Իմ գիմը հոստոս սուս. Բն. լու վրայ:

(Շար.)

Այս և ամենախորին գիտութիւն եւ ամենեւն օգտակար ուսումն եւ ընկերցում,— իր անձին ճշմարիտ անկախութեւ և արեւմտահայրենի:

Իր վրայ ընաւ համարում չունենալ եւ ուրիշներու վրայ միշտ լաւ ու բարձր գաղափար սնուցանել, մեծ խնամքով եւ եւ յարձր կատարելութիւն:

Երեւեակէն ուրիշի մը յայտնապէս մեղանկելը, կամ ծանր յանցանքներ գործելը, պէտք չէր սակայն որ ինք զինքն անկէ աւելի աղէկ համարէր, քան զիստ զիստ միւսիւ ե՛րբ իրենս լաւ վիճակի մեջ յարասնէր:

Ամենքն ալ սկսաւ եկն եւ ջախջախ, սակայն ո՛չ զո՛ք ինքն աւելի սկսաւ համարէ:

ԳԱԹՕԼԻԻՔ ՄԷՉԶԼԵՊԻ ԷՍՏԱՆԱՐԸ

Գ. ՏԵՐԻ ՄԱՆԿԼՈՒԳԱԹ

Տիւնհատէ մէջձուտ օլան տիրի մախու-
զաթ տախի Ալլահըն վարդըղընը իսպաթ է-
տէր, չիւնքի, կէրէք իլմ վէ կէրէքսէ քեմ-
րիպէ, բուլի արգաթ մէջձուտ օլան տիրի
մախուզաթըն էլպէթթէ պիր խալիզի օլ-
մուշ օլտուղընըն գապուլունա պիզի իճպար
էտէր: Իմտի, մատամքի պու խալիզ Ալլահ-
տան մատա պիրի օլամազ. էօյլէ իսէ, տիրի
մախուզաթըն մէջձուտիյէթի Ալլահըն վար-
դըղընը իսպաթ էտէր:

Իլմի հիւմեթի քապիիյէ, պիր վազըթ
եէր իւզէրինտէ հիշ պիր տիրի մախուզ է-
տէրի, հիշ պիր հայաթ էտէրի օլմատըղընը
էօյրէտիյօր, շու հալտէ, պու կիւն մէշու-
տըմըղ օլան հայաթը նէպաթիյէ, հայաթը
հայվանիյէ վէ հայաթը ինսանիյէ նէրէտէն
կէլմիշ տիր աճէպա:

Ազլ տախի պիզէ էօյրէտիյօր քի հայաթը
զլհիիյէ, հայաթը հայվանիյէ շէօյլէ տուր-
տուն, պիզըպաթ հայաթը ցեպաթիյէ պիզէ
մասքէնին մահտուլը էտէրի օլամազ, չիւնքի,
հիշ պիր քիմսէ քէնտիսինտէ օլմայանը վէրէ-
մէզ, մասքէնին տէ հայաթը եօզ տըր, հա-
յաթտան մահրում սըր, պինսէն ալէյ մաս-
սէ տիկէրլէրինէ հայաթ վէրէմէզ:

Տինսիլէր շու աթիտէքի գըյաթը մու-
զասաթ (dilemme) գարչըրնտա պիւսպիւ-
թիւն աճիզ գարմըլ սըրլար, եանի տիւնհա-
տէ մէջձուտ օլան հայաթ, եա թօխումըզ
թէնասիւլ (génération spontanée) թարի-
զիլէ. քէնտիլիյինտէն տօղմուշ տըր, հայաթ-

տան մահրում մատտէտէն զուհուր իթմիշ
տէր, վէ հախտ քեմիսի սիւնեաթէն Ֆարգ-
լը օլարազ մատտէյէ հայաթ վէրմիշ օլան պիր
սեպէպին մէջձուտիյէթիւնի գապուլ իթմէլի-
յիլ: Իմտի, մատամքի Բասթէօրիւն գա-
նաթսպիւշ թէճրիպէլէրինտէն սօնրա, ար-
թըզ թօխումըզ քեմասիւլ Ֆարգիլիսինի գա-
պուլա ճէսարէթ էտէն հիշ պիր ճիտտի վէ
սահիւն ալիմ գալմամըլ տըր, (չիւնքի սահիւն
իլմ, զի հայաթ պիր մախուզըն, եինէ քէն-
տի ճինսինտէն օլան մալիքի հայաթ պի-
րինին եա թօխումը, եա եումուրքասը վէ
հախտ Ֆիլիզի օլմագըղըն մէյտանա կէլէմէ-
յէճէյինի արթըզ պու կիւն սուրէթը գաթի-
յէտէ թատիզ էտիյօր). էօյլէ իսէ, քեմիսի
սիւնեաթէն Ֆարգլը օլարազմատտէյէ հայաթ
վէրմիշ օլան սիրի պիր սեպէպ մէջձուտ
սըր:

Աճէպա, զի հայաթ մախուզաթ ճինսէ-
րինին իլք տանէսի նէրէտէն հուսուլա կէլ-
միշ տիր: Իսթէտիլինիլ գատար սիւսիլէտէն
սիւսիլէյէ կէրիյէ տօղրու կիտինիլ, մուլլա-
գա, հէր ժիլին սեպէպի եվլիլի օլան պիր
եարասընըյա, Ալլահա կիտիպ տայանմազը-
ղընըլ իճապ էտէր: Իշթէ պու, եումուրթա
իլէ թալուղըն էսկի պիւրհանը տըր, Ֆագաթ
էսկի օլմասըյա գուվլէթինի զայպ իթմէ-
միշ տիր:

Հիքեայէ: Պիր քրիթիւն Ֆամիլիա-
տա, պիր կիւն թաամտան սօնրա իքի գըզ-
ճըղազ եան եանա քէնճէրէտէ օթուրմըլ սըր-
բագան պասմուքիւն օգուլօրլարտը: Սուֆրա-
լարնտա պուլունմուշ օլան պիր տէլիպանըլ
պուլնլարա եաղլաշարազ, իսթիհզաքեարանէ
պիր սուրէթտէ՝ «Աճայիպ, խանըմլար, տահա
սիլ պու ֆիքիթտէմիսինիլ, զարիպ շէյ, թա-
րիսի մուգատտէս մի՞ օգուլօրսընըլ, պիլմէ-
հօրմըսընըլ քի, Ալլահ հօզ տըր» տէր ծնլարա:
Բէք էյի, էօյլէ իսէ, էֆէնտի մատամքի սիլ
պու գատար ալիմ կէօրիւնիւեօրսընըլ, շու
իքիսինտէն հանկիսինին էվլէլ օլտուղընը
սէօյլէյէպիլիթմիսինիլ պանա, եանի եումուր-
թա մըլ էվլէլ տիր հօգսաթալուզ մըլ տէր
սնա գըղլարտան էն քիւլիլիլ:

— Թապիլի եումուրթա էվլէլ տիր:

— Շու հալտէ, օ իւք եռմութեան հէքէ-
տէն օլմուշ տըր

— Եօգ կանըլտըմ, թավուգ էվվէլ տիր:

— Բէք էյի, ֆազաթ օ իւք թավուգ հէ-
րէտէն չըգմըշ տըր:

— Իւք թավուգ, իւք թավուգ, շէյ...

— Րէճա խոշրիզ, էֆէնտի, տէյին պա-
գալըմ պու իւք թավուգ հէքէտէն օլմուշ
տըր:

— Իւք թավուգ, շէյ... շէյ... լաքին
պէօյէ պօշ սիւվալընըզա պէնի օսանտըրը-
յօրսընըզ:

— Էօյէ տէյէճէյինիզէ, ալիմ էֆէնտի,
տէյինիզ քի Ալլահըզ իւք թավուգըն կախօտ
իւք եռմութեանն հէքէտէն օլտուղընը թա-
րիֆ իթմէքտէն աճիզսինիզ:

Պունըն իւզէրինէ պիզիմ ալիմ, թավուգ-
տան մաղլուպ օլմուշ թիւքի կիպի պիւսպիւ-
թիւն մահճուպ օլարազ չէքիտի կիթտի:

**Գ. Տիւնեաթ մէվնուս օլան
Բեռաճէյի մախլուգարըն ձէնապը
Ալլահըն վարըղընը իսպարը:**

Քեայինաթտա մէվնուս օլան մախլուգա-
թըն քեաֆէտի տէ ձէնապը Ալլահըն վար-
ըղընը իսպաթ խոշրէր: Աղաճլարտա հէ
գատար կարրապ, չիմէնզարլարաէ հէ գա-
տար օթ, պաղչէլէրտէ հէ գատար չիչէք
վարսա, պունլարըն ճիւմէտի տէ Ալլահըն
վարըղընա պիրէր տէլի տիրէր, չիւնքի
պունլարըն հէրսի տէ մութլագա, պիր սէ-
պէպին էսէրի, պիր խալիգ Ալլահըն մախ-
լուգը տըրլար: Պու մախլուգաթը թէշքիլ ի-
տէն էրքեանը միւքէմմէլ սուրէթտէ թանը-
կան ալիմէր, ծնարտան պիր տանէսինէ պի-
լէ վիւճուտ վերմէքտէն պիւսպիւթիւն ա-
ճիզ տիրէր, պիր աղաճ կարրաղը, պիր օթ
ֆիլիզի, պիր չիչէք զօնչէտի պիլէ կարաւա-
մաղլար:

Լամարթին, թէրզի Բիէր տը Ս. Բօնա սիւալ
էտէրտի քի, ճանըմ, մէքթէպէ կախօտ Քրիստոնէ-
կան Վարդապետսիւն տէրսինէ կիթմէտիլինիզ հալ-
տէ, չօճուգըղընըզա օգուտըղընը քիթապարտա
պունա տալի պիր շէյ կէօրմէտիլինիզ հալտէ, պիր
Ալլաջ վար օլտուղընը հէքէտէն պիլիյօրսուընը:

— Բիէր տը Ս. Բօնա— Էֆէնտի, էվվէլ էմիրտէ
մէճպուրըմ իգրար իթմէյէ քի, վալիտէմ պանա
պու խուսուստա տէրս վէրմիշ տիր: Ֆազաթ, շալէտ
վալիտէմ պանա հիչ պիր շէյ սէօյլէմիշ պիլէ օլմասա
Ֆրանսատա օլան տէվրիմ էանասընտա, քիլիսալարտա
Քրիստոնէական Վարդապետսիւն էօյրէտիլինի
տախի կէօրմէտէմ վէ իլիթմէտէմ, աճէպա, պիզի
իհաթա իտէն հէր շէյ, հէր մախլուգ, ճահիլէրին
բուհընա վէ կէօրմէտէ սէօյլէյէրէք օնլարը թալիմ ի-
տէճէք, օնլարա Ալլահըն վարըղընը էօյրէտէճէք պիր
Քրիստոնէական թէհիյէ վէ իրալէ իթմէզ մի: Աճէ-
պա, Ալլահըն իսմինի օգուտապիլմէք իլիւն Այբեւա
րան հրուֆաթընա իհիթիւաճ մը վար տըր: Աճէպա
օնուն վարըղընըն ֆիքրի, նուրըն իւք չիւլէլէրիլէ
պէրապէր, կիթլիլիմիզէ, իւք թէֆէքթիւրիմիլլէ պէ-
րապէր, Քիլիլիմիզէ, գալպիմիզին իւք չարընտըրըլա
պէրապէր, Եիլիլիմիզէ տախիլ օլմա՞ց մը: Պաշա
ինսանլարըն հապը օլտուգլարընը պիլմէմ, ֆազաթ
պէն, պիր էրաղը աշիլ, սատէճէ պիր գարընճա, պիր
աղաճ կարրաղը, պիր գուճ տանէսինի պիլէ «Սէնի
քիմ կարմըշ տըր» տիլէ սօրմագսըղըն կէօրմէմ:

— Լամարթին ճէվապէն աէտի, Ալլահ կարաթմըշ
տըր, տէրսինիզ, տէյիլ մի:

— Բիէր տը Ս. Բօնա— Թապիի տիր, էֆէնտի.
չիւնքի օ կէօրտիլիմ շէյլէր քէնտլիքլէրինտէն օ-
լամաղլար: Բէք էյի, պիր շէյի տէ կարապիլմէք իլիւն
վար օլմագ լագըմ կէլիլ, գանն իտէրսէմ: Պու մախ-
լուգաթ օլմագտան էվվէլ, հէր հալտէ վիւճուտլարը
կօրտը, պինաէն ալէյհ տէ, վիւճուտլարը օլմատըղը
իլիւն քէնտի քէնտիլէրէ վիւճուտ, վարըզ վէրէ-
մէզլէրտի Պու գատարընը աղայապիլմէք բէք միւշ-
քիլ տէլի տիր, իլթէ պէն, հիչ տէլիլտէ, պու սու-
րէթլէ տիւլիւնէրէք Ալլահըն վարըղընը չօգ գօլայ
պուլույօրսու՞մ: Լաքին սիզ թապիի տիր քի, տահա
կիւքէք վէ տահա ֆարգըլը սուրէթտէ օնուն վար-
ըղընը իսպաթ էտիր վէ աղարաղընը:

— Լամարթին— Խա՛յր, հէր հէ սուրէթլէ տէ
սէզլէտէ, Եինէ նիհայէթէն սիզին շու պասիթ մու-
հաքէմէնիզին նէթիճէսինէ կէլիպ կէթիլիլիլ: Էվվէլթ
չօգ քէլիմէլէրէ իսպաթ իտիլէպիլիլ, ֆազաթ մանա
տալիմա պիր գալըր:

**Գ. Ազլ ու իսրաֆ վէ Եիւրբիյէր սահիպի
ինսանըն մէվնուսիյէրի թէ Ալլահըն
վարըղընը իսպար իսէր:**

Ազլ ու իսրաֆ սահիպի ինսանըն մէվ-
նուսիյէթի սուրէթի մախսուսէ վէ գաթիյէ-
տէ Ալլահըն վարըղընը իսպաթ խոշրէր: չիւն-
քի պիր թէյի հուսուլա կիթիմիլէ միւզքէթի
պիր սէպիպ օլմասըզնա օ շէյ, օ՞չէտէր մէյտա-
նա կէլէմէզ: Տիւքիւնէն, քիֆէֆիւր իսէն

մուհաֆեմէ էյլէյն, վէ իսթէյն պիր վարլըզ, անճագ, ազլ ու իտրաք սահիպի, գուզվէյի խալիգիյէյէ մալիք պիր սէպէսպէն իլէրի կէլէսլիլիր: Իմտի մատամ քի, պու ազլ ու զէքէա սահիպի վէ գուզվէյի խալիգիյէյէ մալիք օլան սէպէս Ալլահ տըր. էօյլէ իսէ, ինսանն վարլըզը Ալլահն վարլըզընը իսպաթ էտէր: Հէր ինսան քէնտի քէնտինէ տէյէպիլիր, պէն ֆիւլէնիյօրմ, պիմանն ալէյն, պէն վարլմ, մասամ ֆի պէն վարլմ, էօյլէ իսէ պէնի վար իսէն Ալլահ սա վար սըր:

Մէյտանտա, հիչ չիւպէն իտիլէմէյէճէք պիր վագաա մէվճուտ տըր. եանի. պէն էօմբիւմիւն կիւնէլէրինի վէ սէնէլէրինի սայապիլիրիմ, պէն հէր վազըթ պէր հայաթ տէյիլտիմ, պիր վազըթ մուայէէնտէ վար օլմազա եաշամազա պաշլատըմ, պու վարլըզը, պու հայաթը պանա քիմ վէրմիչ տիր:— Աճէպա, պէն քէնտիմ քէնտիմէ մի վարլըզ վէրմիչիմ,— եօզսա էպէվէյնիմ մի,— եախօտ շու կէօրտիլիմ մախլուզաթտան պիրի մի,— եօզսա եարատըմը պիր բուհ մը պանա վարլըզ վէրմիչ տիր:

1. Պէն ֆէնսիմ ֆէնսիմ վարլըզ վիւմիմիւ, չիւնքի, վար օլմազտան էվվէլ պէն հիչ իտիմ, հիչտէն իսէ պիր շէյ հուսուլա կէլէմէզ:

2. Եալընըզ կպիլէյնիմ սէ պանա վարլըզ վիւմիմիւ սիւ: Չիւնքի պիր շէյի եարան ծուռն պօզուլտըզնուա թափիր իթմէյէ, խաբապ օլտուղընուա թէքրար եարմայա միւզթէտիր նիր: Հալպուքի, խասթա օլաճագ օլուրսամ, էպէվէյնիմ պէնի տիւղէլթէմէզլէր. էօլէճէք օլուրսամ, թէքրար տիրիլթէմէզլէր. էօյլէ իսէ եալընըզ էպէվէյնիմ պանա վարլըզ վէրմէմիչ տիր:

(Մապասի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Սրբազան Քահանայապետը մամաւոր ունկընդրութեան ընդունեցաւ Ս. Աթոռայ Ժօտ Աւստրիոյ գեապանաւան խորհրդական Կոմս Աղեքսանդր Եկըրցինսքի:— Պիպէս ընդունեցաւ Գերմանիոյ արուեստաւորաց ներկայացուցիչ խումբ մը 200 հոգիէ բաղկացած, որոնց կ'առաջնորդէր Տեւտոնեան Վարժարանին վարիչ Գեր. Տէ— Վաալ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Ատենէ մը ի վեր եկեղեցիներու մէջ ըմբոստներուն կողմանէ գայթակղեցուցիչ արարքներ աեղի կ'ունենան. սակայն անցեալ կիրակի, Յունուար 19ին, եղածները ամենէն աւելի սոսկում ու սարսուռ կ'ազգեն ամէն Հայ Կաթողիկէի, ամէն Քրիստոնէի, մանաւանդ թէ ամէն մարդուն:

Վեց անպատկառ ըմբոստներ՝ կէսօրէն վերջը յանկարծ կը մտնեն Ս. Ոսկերեան Եկեղեցին, կը բռնեն լուսարարը և սպառնալեօք կը ստիպեն լուռ կենալու. Եկեղեցւոյ դռները փակելով ամբարշտօրէն կը ձեռնարկեն զարհուրելի սեղանակապտութեան մը: Պատէն վար կ'իլեցնեն սանդուխով՝ Խաչի ճանապարհին բոլոր պատկերները և ոտնակոխ ջարդ ու փշուր կ'ընեն նմանելով պատկերամարտ հերետիկոսներուն կամ հաւածիչ հեթանոսներուն:

Այս անօրէն շահատակներէն Մշեցի երիտասարդ մը՝ Ոսկերեանէն կը վազէ Աստուածածին Աթոռանիստ Եկեղեցին, ու երէկոյեան ժամերգութեան ըսկիզբէն կը կենայ դասին ետեւը, մէջտեղը, աթոռի մը կռթնած: Երբ գպիւրները կ'երգեն Շնորհա՛, Տէ՛ր, ինքն ալ ճիւղաղաձայն նոյնը կրկնելով աթոռ վերցնելը և ժամարար Արհի. Արփիարեան Արքեպիսկոպոսին գլխուն իջեցնելու փութալը մէկ կ'ընէ: Ն. Արհիպատուութիւնը արագ շարժումով մը խոյս կ'ուտայ հարուածէն: Եկեղեցւոյ մէջ ժողովուրդ չգրտնուելուն՝ դասը եղողները կը հալածեն լիբը անօրէնը, որ ոտտիկանութենէն կը ձերբակալուի և հարցաքննութեան կ'ենթարկուի:

Անհուն ցաւով է որ կ'արձանագրենք այս դէպքերը, որոնց վանատալկան, խժգժական հանգամանքները ինքնին կը հրաւիրեն ըմբոստներուն վրայ ներկայ և ապագայ սերունդին անէծքն ու պժգանքը և ցայտուն ապացոյցներ կը հանդիսանան այդ անձանց՝ Կաթողիկէ անուան տակ՝ ոմանց անկրօն և ոմանց անշուշտ անտարբեր գաղափարներ և գգացումներ ունենալուն, և եկեղեցական իշխանութեան իրենց հանդէպ բռնած ընթացքին շատ իրաւացի ըլլալուն: Ահա ի՞նչ ամբարշտութիւններ կը ծնանին Եկեղեցական գերագոյն իշխանութեանց դէմ ապստամբութիւնն ու

հերձուածքը «Միթէ փուշերէն խաղող կրնամք քաղուել... Ի պըտողոյ նոցա ծանիջիք զնստս»

* Լիբանանու նորընտիր կուսակալ Յովհաննէս փաշա Գուլամ ճեան՝ անցեալ ուրբաթ, Յունուար 17ին, Մէսաթըրի շոգենաւով մեկնեցաւ իր պաշտօնավայրը Ամենապատիւ Հոգեւոր Տէրոջ կողմանէ շոգենաւը ողջերթի գնաց Արհիպպատիւ Արքիարեան Արքեպ. ընկերակցութեամբ Գեր. Սարուխանեան Յովսէփ Վ.ի:

* Շաբաթ օրը, Յունուար 18ին, Պոլիս ժամանեց Գեր. Խաչիկ Վ. Աթանասեան կանխաւ առած հրամանին համեմատ:

* Երկուշաբթի օրը՝ Վիեննայէն Պոլիս ժամանեց Գեր. Յովհաննէս Ծ. Վ. Թումայեան:

* Տիրապետէն կը տեղեկագրեն թէ Հաննա էֆ. Գազազեանի սպաննիչները ազատ արձակուել են:

* Երեքշաբթի օրը Ամին. Հոգեւոր Տէրոջ այցելութեան եկաւ Յունաց Պատրիարքին փոխանորդը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր .

Հաշտութեանց բանակցութեանց խզուելէն ի վեր կը սպասուէր Մեծ Պետութեանց կողմանէ տրուելիք Ծանուցագրի մը: Բաւական ձգձգումներէ յետոյ այդ Ծանուցագիրը տրուեցաւ վեց Պետութեանց Կ. Պոլսոյ Գեապաններու կողմանէ առանձին առանձին ուրբաթ օրը Յունուար 17ին: Ասոր մէջ գլխաւորաբար կը պահանջէին որ 1. Էտիքեն յանձնուի Պալքանեան Տէրութեանց. 2. Կղզիներու խնդիրը թողուի արամադրութեան Մեծ Պետութեանց, որոնք նկատի պիտի առնուին նաեւ, այդ խնդրին մէջ, Անատոլի շահերը: Կը ծանուցուէր միանգամայն թէ հակառակ պարագային ուրիշ տեղեր ալ վտանգի պիտի ենթարկուին: Կառավարութիւնը այս ամենակենսական խնդիրը որոշելու համար, Չորեքշաբթի օր, Յունուար 22ին, Տոմա-պողչէի Կայսերական պալատին մէջ, Երեւեկեաց խորհրդակցական ժողով մը գումարեց, ուր ամէնքը կատարեալ զստահութիւն յայտնելով Վարչութեան, անոր յանձնեցին այդ ծանրակշիռ խնդիրը խաղաղութեամբ կարգադրելու հոգը:

* Համիսիլէ մարտանաւը անցեալ գիշեր Տարտանէլէն դուրս ելլելով յաջող յանգանութեամբ մը յարձակում գործեց Շիրայի նաւահանգստին վրայ, և վարդարանը հրդեհելով ռմբակոծեց և խրեց Յոյն յաճանաւը որ հոն կը գտնուէր. և խոյս տալով Յունական նաւատորմին հետագնդումէն հասաւ մինչեւ Փոր-Սալիս:

* Նոյնպէս Օսմ. նաւատորմից մինչեւ Լեմնոս ուղևորելով Յունական տորմին հետ ծովային ճակատամարտ մը մղեց և մեծ փառքեր հասցնելով ետ դարձաւ: Այս ծովային գործողութիւնները մեծ դրուատիքներով ողջունուեցան Եւրոպական մամուլէն:

* Ռիւթէր կ'իմանայ թէ դեսպանները որոշած են Այնորդը նկատել կրօնական անկախ Հանրապետութիւն մը:

* Յունաց Պատրիարքարանի պահանջման վրայ, կառավարութիւնը հրահանգ տուաւ Ընդհ. դատախազութեան դատ բանալու Թապիւրի Էմբեսարէ դէմ, որ Խաչը նախատող հրատարակութիւններ բրած է:

* Նախկին Երեսփոխան Վարդգէս էֆ. պատերազմական Ատենի կողմանէ երկու ամսուան բանտարկութեան դատապարտուեցաւ, Յաւաքամարս թերթին մէջ իր գրած մէկ յօդուածին համար, որ տխրոս ունէր. Հայերը յուսահատած են օրէնքի գործադրութենէն:

* Երբեք թէ կառավարութիւնը որոշած է ծխախոտի Բէթիին առանձնաշնորհման պայմանագրով երկարաձգել քսան տարի եւս:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Պարոն Փուսնգարէ Գազզիլը Հանրապետութեան Նախագահ ընտրուեցաւ Վերսալի համաժողովին 483 ձայնովը. քուէարկողներուն թիւն էր 868:— Փուսնգարէ ծնած է 1860ին և այլեւայլ նախարարութեանց մէջ մեծ ծառայութիւններ մատուցած է և կը վաշիլէ քաջ քաղաքագէտի համբաւ: Իր պաշտօնին պիտի ձեռնարկէ ամիս մը վերջը:— Պ. Գալիէր Նախարարապետի պաշտօնը յանձնեց Պ. Պրիանի, որ սակայն շատ գծաւարութեանց կը բախի նախարարութիւնը կազմելու մէջ:

Տէր Կոմիկաւ Բաճանայ	49
Թուրք Հովուական	52
Կաթողիկոսական այցելուն ի Զմմառ	56
Օրմանեանի Հայոց Յիկողցի գիրք	57
Հոգեհանգիստ Հ. Ղեւոնդ Ալիբեանի յիշատակին	59
Եօթնեակ Քրիստոնէի	60
Գաթոլիկ Մէզգէպի էսալար	61
Տեղեկագրական	63

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանց Շաբաթերի, Բերա, Պայրամ փողոց քիւ 5, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դնկ.:— Ահաւասիւման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԵ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

KATOGHIGHE ARZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԵՐ.— 1.—Արձագանգ կը նրաստարկուի Շաքար օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ նրաստարկել իրեն դրկուած ո եւ է յօդուած: 3.—Կեղծանունով դրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր խկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէժ է գրուած ըլլան թուրքի մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէժ է անհրաժեշտ երկու դանեկանի նամակագրութեամբ միասին դրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն է ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրատարակութիւններ, քարտեր, քարտ-անտներ, մանագրներ, եւն., եւն.: Գիրքեր անմեղելի կերպով աման են: Գեղեցկագիտական նաւակի եւ տպագրական մատուցման կողմանէ թ յանձնարարները անտարակոյս զոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԻ «Տարրական Ակբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դնկն.:
